Արցախի պետական համալսարանը հայտարարում է ասպիրանտուրայի առկա ուսուցման համակարգի 2021 -2022 ուս. տարվա ընդունելություն:

Ասպիրանտուրայի փաստաթղթերն ընդունվում են՝ ս.թ. օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը:

Քննությունները կկազմակերպվեն ս.թ.սեպտեմբերի 07-10-ը:

N	Դասիչ	Մասնագիտության անվանումը	Անվճար	Վճարովի
1.	Ա.04.02	Տեսական ֆիզիկա	1	
2.	Է.00.04	Ազգագրություն (ազգաբանություն)	1	
3.	Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1	
4.	Ժ.01.03	Ռուս գրականություն	2	
5.	Ժ.01.05	Բանահյուսություն	1	
6.	Ժ.01.06	Ժուռնալիստիկա	2	
7.	Ժ.02.04	Սլավոնական լեզուներ	1	
8.	ԺԳ.00.01	Մանկավարժության տեսություն և պատմություն	1	
9.	ԺԷ.00.04	Արվեստի տեսություն և պատմություն	1	
10.	ԻԴ.03.01	Աշխարհագրություն	1	
		Ընդամենը	12	-

Ցանկ
ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի.

1. Դիմում ռեկտորի անունով;
2. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները /օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին/:
3. Օտար լեզու առարկայի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
4. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:
5. Ինքնակենսագրություն/:
6. Երեք լուսանկար /3x4/:
7. Քաղվածք աշխատանքային գրքույկից /առկայության դեպքում/:
8. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ:
9. Անձնագիրը պատճենի հետ միասին:
10. Արագակար:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համալսարանի գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին կամ զանգահարել 047940443.170 հեռախոսահամարով: